

ՆԱԽՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենսուրոն, դեկան,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԺՈՉԵՖԻՆԱ ԵՍԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենսուրոն, հոգեբանության ամբիոնի ասպիրանտ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻՉԱՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեղազուրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորվող 16A-5a08 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հոդվածում ներկայացված են սոցիալական կարծրատիպերի ձևավորման հիմնական մեխանիզմները և գործընթացները: Կարծրատիպերը հիմնվում են այնպիսի հոգեբանական գործընթացների վրա, ինչպիսիք են՝ հասկացությունների և դասակարգումների ձևավորումը, ատրիբուցիան, հույզերը, գնահատականը և հիշողությունը: Կարծրատիպերը հանդիսանում են հոգեբանական գործընթացների պրոդուկտ: Սոցիալական կարծրատիպերի ձևավորման աղբյուր հանդիսանում է ինչպես մարդու անհատական փորձը, այնպես է՝ հասարակության կողմից մշակված նորմերը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. Սոցիալական կարծրատիպ, մեխանիզմներ, ատրիբուցիա, հույզեր, գնահատական, հիշողություն, դասակարգ:

Մենք ապրում ենք կարծրատիպերի աշխարհում, նույնիսկ կարելի է ասել, որ կարծրատիպերը որոշում են բարոյական նորմերը, ձևավորում կրոնական, քաղաքական և այլ կրնցեացիաներ: Ցուրաքանչյուրիս կյանքում կարևոր դեր են կատարում նաև վարքային կարծրատիպերը, որոնք շատ դեպքերում որոշում են մեր վարքը, և վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Շորիհիվ այդ կարծրատիպերի՝ մենք հստակ գիտենք՝ ինչպես մեզ դրսերենք այս կամ այլ

իրավիճակում, գիտենք՝ ինչն է լավ, իսկ ինչը վատ, ով է ձիշտ, իսկ ով սխալ, սակայն կարծրատիպերը, որոնց հիմնված են մեր պատկերացումները և որոշումները, կարող են ձևավորված լինել սխալ հաղորդագրությունների հիմանվար: Սոցիալական կարծրատիպերի հիմնախնդիրները առանձին-առանձին ուսումնասիրվել են վիլխովայության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության, հոգեբանության շրջանակներում:

Ըստհանուր գիտության մեջ առաջին անգամ «կարծրատիպ» հասկացությունը կիրառվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում, երբ առաջացավ մասսայական գիտակցության գործունեության օրենքների ուսումնասիրության և բացատրության անհրաժեշտությունը: Կարծրատիպային մտածելակերպի և վարքի կոնցեպցիայի հիմնադիրը դարձավ ամերիկացի գիտնական, սոցիոլոգ, լրագրող **Ուլլիմեր Լիպմանը** (*Walter Lippman*): Համաձայն Ու. Լիպմանի «Հասարակական կարծիք» (1922 թվ.) աշխատության՝ կարծրատիպերը՝ կարգավորված, սխենատիկ, դեմերմինացված «պատկերներ» են մարդու գիտակցության մեջ, որոնք բարդ սոցիալական օրինեկտների ընկալման հարցում խնայում են մարդկանց ջանքերը և պաշտպանում նրանց արժեքները, դիրքերը և իրավունքները [5, էջ 95-114]:

Ներկայիս աշխարհի գիտատեխնիկական առաջնորդացի, տեղեկատվական գերեզմանվածության պայմաններում սոցիալական կարծրատիպերը մի կողմից՝

հեշտացնում, պարզ եցնում են հասարակական քարդ երևոյթների ընկալումը, մյուս կողմից՝ «կաղապարում են» մարդկանց, խոչընդոտում անձի լիարժեք ինքնիրացմանը, սեփական ներուժի օգտագործմանը, ստեղծագործական ուսակությունների արտահայտմանը:

Չնայած այս ամենին՝ կարծրատիպերը հանդիսանում են յուրաքանչյուրիս կյանքի անքակտելի մասը: Մարդիկ հաճախ մտածում են, որ երևոյթների կամ առարկաների մասին իրենց պատկերացումները կամ ընկալումը համապատասխանում է, և եթե երկու մարդ միենույն առարկան ընկալում են տարբեր կերպ, ապա նրանցից մեկը միանշանակ սխալ է: Սեփական պատկերացումները մարդուն միշտ ծիշտ են թվում և ենթակա չեն քննարկման: Արդեն ձևավորված կարծրատիպերը շատ կայուն են և հաճախ պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում, իսկ դրանց քանդվելը շատ ցավալի գործընթաց, որը հանգեցնում է գրգռվածության, առաջացնում է անհանգստություն, հոգեկան հավասարակշռվածության խանգարումներ, սթրեսային վիճակներ, ինչն էլ կարող է հանգեցնել ինսուլտի և ինֆարկտի: Կարծրատիպերի ձևավորումը հանդիսանում է մեր մշակույթի պարտադիր տարր, բայց այս ամենով հանդերձ՝ կարծրատիպերի ձևավորումը առաջացնում է որոշակի պահպանողականություն ինչպես մեր գործունեությունում, այնպես էլ մտածելակերպում:

Կարծրատիպերը հանդիսանում են հոգեբանական գործընթացների պրոդուկտ: Սոցիալական կարծրատիպերի ձևավորման աղբյուր հանդիսանում է ինչպես մարդու անհատական փորձը, այնպես է՝ հասարակության կողմից մշակված նորմերը: Տարբեր սոցիալական խմբեր մշակում են կարծրատիպեր, կոնկրետ գործոնների կայուն բացարություններ: Կարծրատիպերը հանդիսանում են անհրաժեշտ և օգտակար գործիքներ աշխարհի ձանաշման համար: [4] Կարծրատիպերի ձևա-

փորման մեխանիզմները հանդիսանում են մի շարք կողմիտիվ գործընթացներ, քանի որ կարծրատիպերը կատարում են կողմիտիվ գունկցիաներ: Հետևաբար, կարծրատիպերի ձևավորման մեխանիզմները կապված են մարդկային մտածողության և հոգեկանի առանձնահատկությունների հետ: Կարծրատիպերի ձևավորման գործում իր յուրահատուկ տեղն ունեն զանգվածային լրատվության միջոցները: ԶԼՄ-ների օգնությամբ կարծրատիպերի ձևավորման հավանականությունը սահմանափակ չէ ինչպես իր մասշտարկերով, այնպես էլ ազդեցության ուժով: Գոյություն ունեն մի շարք արդյունավետ հնարքներ, որի միջոցով կարելի է ազդել մարդկանց գիտակցության վրա, ինչն էլ օգնում է ձևավորել կարծրատիպերը: Այդ հնարքներն են՝ հետաքրքրությունների համընկման օգտագործումը, նոր կարծրատիպերի կապը հների հետ, կարծրատիպերի փոխարինման հնարքը և այլն: Զանգվածային լրատվության միջոցները հաճախ ներկայացնում են քենադրում, ինչը նրբուն անհատին ուղղում է ինֆորմացիայի թարնված իմաստի պասիվ ընկալմանը: Այս դեպքում խնդիրը դիտարկվում է բայց սխեմաների: Չեշտը դրվում է կարծրատիպերի վրա: Կարևոր է նշել նաև, որ շատ մարդկանց համար, ռադիոն, հեռուստատեսությունը, մանուլը հանդիսանում են հիմնական հեղինակություն: ԶԼՄ-ների կարծիքը դաշնում է մարդկանց կարծիքը: Մեծ նշանակություն ունի նաև ինֆորմացիայի աղբյուրի կարգավիճակը: Օրինակ՝ ինֆորմացիայի ազդեցությունը մարդկանց վրա ակնհայտ է այն դեպքում, եթե այն տրվում է որևէ հայտնի բաղադրական կամ հասարակական գործչի կողմից: Այսեղ կարևոր դեր է կատարում ինֆորմացիայի աղբյուրի հեղինակության գործոնը: Հետևաբար, որքան բարձր է ինֆորմացիայի աղբյուրի հեղինակությունը, այնքան ավելի բարձր է մարդկանց կողմից վատահությունը տվյալ ինֆորմացիայի նկատմամբ: Նոյնիսկ եթե որոշ անհատներ քննադատում

ին են մոտենում տվյալ աղբյուրի ինֆորմացիային, միևնույն է, այն դրոշմվում է նրանց գիտակցության մեջ: [5] Ըստ Դ. Մացումուրյահ՝ կարծրատիպերը հիմնվում են այնպիսի հոգեբանական գործընթացների վրա, ինչպիսիք են՝ ընդուղական ուշադրությունը, հասկացությունների և դասակարգումների ձևավորումը, ապրիրուցիան, հոյզերը, գնահատականը, և հիշողությունը [7]:

Կարծրատիպերի ձևավորման հարցում շատ կարևոր է կառուզալ ատրիբուցիայի դերը: Կառուզալ ատրիբուցիայի ուսումնասիրությունների հիմքը դրվել է Ֆ. Հայդերի կողմից, ով էլ ներկայացրել է հիմնական կատեգորիաները և սկզբունքները: Կառուզալ ատրիբուցիան (լատ.՝ *cause–պատճառ, attribution–վերագրում բառերից*) միջանձնային ընկալման երևոյթ է, որի ժամանակ տեղի է ունենում մեկ մարդու գործողությունների պատճառների վերագրումը մեկ այլ մարդու, ինչն էլ ինֆորմացիայի պակասի հետևանք է: Ըստ մի շաբը հեղինակների՝ ատրիբուցիաները մեր կյանքում կարևոր դեր են խաղում, քանի որ թույլ են տալիս կազմակերպել ինֆորմացիան, քանի որ մեր շրջապատում մեծ քանակությամբ ինֆորմացիայի հոսք գոյություն ունի: Մի շաբը հետազոտություններ ցույց են տվել, որ ատրիբուցիաները կապված են կարգավորման հետ, իսկ այն մարդիկ, ովքեր ձգտում են կարգավորման, կիրառում են ատրիբուցիաներ առավել հաճախ, քան որիշները [6, 7]:

Ատրիբուցիայի ժամանակ մարդիկ բացատրում են վարքը ներքին (անձնական, սուբյեկտիվ) և արտաքին (իրավիճակային, օրյեկտիվ, միջավայրային) գործոնների ազդեցությամբ: Կարծրատիպերը առաջանում են բավականին սահմանափակ նախակին փորձի հիման վրա, այսինքն՝ եզրակացությունները հիմնված են սահմանափակ ինֆորմացիայի վրա: Հենց այդպես էլ հաճախ առաջանում են մարդու խմբային պատկանելիության կարծրատիպերը, օրինակ՝ պատկանե-

լություն ինչ-որ մասնագիտության: Վառ արտահայտված մասնագիտական բնութագրերը, որոնց հանդիպել ենք նախկինում այն մարդկանց մոտ, ովքեր ունեին տվյալ մասնագիտությունը, դիտարկվում են որպես բնութագրեր, որոնք վերագրվում են բոլոր այն մարդկանց, ովքեր հանդիսանում են այդ նույն մասնագիտության ներկայացուցիչ (օրինակ՝ բոլոր հաշվապահները պեղանտ են) [2]:

Կարծրատիպերի ձևավորման հարցում մեծ ազդեցություն ունի նաև անձի հուզական դաշտը: Մեր առօրյա կյանքում հոյզերը շատ կարևոր բաղադրիչ են հանդիսանում. դրանք մեր վարքի կարևոր մոտիվացիաներն են, որոնց միջոցով մենք հասկանում ենք, որ պեսոք է փախչել, երբ մենք վախենում ենք, կամ հարձակվել, երբ մենք բարկացած ենք:

20-րդ դարի վերջում Զ. Ֆորգասը և նրա գործընկերները հետաքրքիր հետազոտություն են կատարել, որտեղ ներկայացվել է հոյզերի դերը այլ մարդկանց ընկալման ժամանակ, միջամրային դիմումների և կարծրատիպային մտածելակերպը: Հետազոտություններից մեկի ժամանակ Զ. Ֆորգասը և նրա գործընկերները հետազոտվողների մոտ առաջացրել են ուրախ, տխուր և չեզոք հոյզեր, ովքեր հետո կարծիր են կազմել ասիացիների և եվրոպացիների մասին, ովքեր փոխսհարաբերություններ ունեին իրենց կամ այլ ռասային պատկանող մարդու հետ: Այն մասնակիցները, ովքեր ուրախ հոյզեր ունեին, առավել դրական արձագանք են տվել այդ մարդկանց մասին, իսկ այն մասնակիցները, ովքեր տխուր էին, առավել բացասական արձագանք են տվել: Զ. Ֆորգասը ենթադրում էր, որ այլ մարդկանց մասին կարծրատիպային մտածելակերպի վրա մարդու հոյզերը կամ տրամադրությունը ամենաքիչ դերն են խաղում [9]:

Ըստ Դ. Մացումուրյահի, այս հետազոտությունում հոյզերի հետ կապված երկու շատ կարևոր իրադարձություն չի ստուգվել, ինչը անհրաժեշտ է կարծ-

բատիպային մտածելակերպի գործընթացի համար: Առաջինը վերաբերում է բացասական հույզերի դուրսերմանը, որը կապված է սպասումների անհամապատասխանության հետ, ինչպես նաև սեփական մշակութային առանձնահատկությունների: Երկրորդը վերաբերում է կարծրատիպայացման գործնքացի դրական հույզերին, ինչը ամրապնդում է այդ գործնքացը: Ըստ Դ. Մացումոսոյի՝ կարծրատիպերի ձևավորման գործնթացում հույզ երբ շատ կարևոր դեր են կատարում, քան դա ներկայացված է Ֆորգասի և նրա գործնկերների հետազոտություններում [7, 84]:

Կարծրատիպերի ձևավորման հաջորդ կարևոր գործնքացները հանդիսանում են գնահատականը և հիշողությունը:

Գնահատական: Երբ մենք դիտարկում ենք որոշակի իրադարձություններ կամ շփվում ենք մարդկանց հետ, ապա անընդհատ գնահատում ենք այդ դրդիչները: Գնահատական անվանում են գործնքացը, ինչի արդյունքում մենք որոշում ենք դրդիչի համապատասխանությունը՝ ըստ մեր կյանքում դրա նշանակության: Գնահատման գործնքացի հետևանքով մեզ մոտ առաջանում է հույզական ռեակցիա, այնուհետև մենք որոշում ենք կայացնում, որը վերաբերում է առելքաւ վարքային արձագանքներին: Գնահատման գործնքացը համապատասխան է կարծրատիպերին, քանի որ այն ապահովում է այնպիսի հոգեբանական մեխանիզմ, ինչի հետևանքով մենք ակտիվ ազդում ենք արտաքին դրդիչների վրա և մշակում ենք դրանք՝ ըստ մեզ համար նշանակության: [7]

Հիշողություն: Հիշողություն անվանում են մեր կարողությունը վերիիշելու անցյալի իրադարձությունները, մարդկանց, օրյեկտները, իրավիճակները, ձեռք բերված հմտությունները և այլն: Ըստ Ռ. Աղոլինսոնի և Ռ. Շիֆրինի՝ դասակարգման՝ առանձնացնում են հիշողության և դրա հետ կապված գործնթացների 3 ենթափակ՝

1. սենսորային հիշողություն. հիշողության հետ կապված դրդիչների առաջնային կարգավորում.

2. կարձատև հիշողություն («աշխատանքային հիշողություն»), որը հանդիսանում է միջնորդ սենսորային և երկարատև հիշողության միջև («կարձատև պահուստ»).

3. երկարատև հիշողություն. Երկարատև ժամանակահատվածի համար ինֆորմացիայի պահուստ («երկարատև պահուստ»):

Ըստ Ե. Տուլվինզի՝ դասակարգման՝ սեմանտիկ (իմաստաբանական) հիշողությունը հանդիսանում է երկարատև հիշողության յուրահատուկ տիպ, որը հիմված է բառերի և հասկացությունների վրա. այնտեղ պահպան են օրենքներ, արստրակտ հասկացություններ և ընդհանուր պատկերացումներ աշխարհի մասին, ներառյալ այլ մարդկանց: Սեմանտիկ հիշողությունը ստվորաբար հիմնվում է պատկերների վրա՝ կապված իրադարձությունների, փորձի և ձեռք բերված գիտելիքների հետ: Այն կարող է նաև հիմված լինել վերքալ գիտելիքների վրա, որը փոխանցվում է մեկ անձից մյուսին, և հիմնված չէ փորձի վրա, այլ վերաբերում է գիտելիքներին, որը կուտակվել է երկարատև ժամանակահատվածում: Այն անընդհատ փոփոխվում է կամ ամրապնդվում, երբ անհատը գործ է ունենում հարազատ գործոնի, իրադարձությունների կամ փորձի հետ: Սեմանտիկ հիշողության այդ հատկությունները դարձնում են նրան կարծրատիպերին համապատասխան:

Սեմանտիկ հիշողության մեջ պահպանվող գիտելիքները հանդիսանում են հիմք դատողությունների ձևավորման և մտածողության համար: Դրանց ամրապնդման բարձր մակարդակի դեպքում այդպիսի գիտելիքները կարող են կարծրատիպային դատողությունների տեսք ընդունել:

Կարծրատիպերը առաջանում են մարդկանց տարրեր կատեգորիաներին

դասակարգելու հետևանքով, օրինակ՝ ազգություն, ռասսա, էթնիկ խմբեր, սեռ և այլն: Հ. Թեզֆելը տարրերակում էր սոցիալական կարծրատիպերը այլ կարծրատիպերից, և կարծում էր, որ կարծրատիպերը կարող են դառնալ սոցիալական այն դեպքում, եթե դրանք վերաբերում են մարդկանց մեծ խմբերին, այսինքն՝ վերաբերել ասելով՝ այստեղ հասկանում ենք կարծրատիպերի ձևավորման արդյունավետ գործընթացը մարդկանց գիտակցության մեջ: Մարդիկ ընկալում են աշխարհը տվյալ մշակութայի մեջ ձևավորված պատկերացումներով, հարաբերություններով, արժեքներով և դրանքում են իրենց տվյալ մշակութիւններին համապատասխան [10, 11]:

Մեզ համար շատ ավելի հեշտ և արդյունավետ է ստեղծել ինֆորմացիայի դասակարգումներ, ինչպես նաև գնահատել դրանք, և գործել շատ այդ դասակարգումների, քան թե վերլուծել յուրաքանչյուր անհատական էլեմենտ: Կարծրատիպերը հանդիսանում են դասակարգումների պարունակություններ: Այդ պատճառով կարծրատիպերը կարող են դիտարկվել որպես «դերային սխեմաների յուրահատուկ տիպեր», որոնք կազմակերպում են նախորդող

գիտելիքները և անձի սպասումները այլ մարդկանցից, որոնք համապատասխանում են դասակարգումներին»:

Հոդվածը ամփոփելով՝ կարելի է ասել, որ կարծրատիպերը հանդիսանում են անձի գիտակցության անքակտելի մաս: Սոցիալական կարծրատիպերը ձևավորվում են ավելի հեշտ, քանի որ մեր սեփական դաստիարակությունը և մշակույթը մեզ մոտ առաջացնում են որոշակի սպասումներ կապված այլ մարդկանց վարքի և առանձնահատկությունների հետ: Սոցիալական կարծրատիպերի ձևավորման աղբյուրը հանդիսանում է ինչպես մարդու անհատական փորձը, այնպես էլ՝ հասարակության կողմից մշակված նորմերը, որը մարդը ստանում է ուսուցման ընթացքում, զանգվածային լրատվության միջոցների ազդեցության հետևանքով և այլն:

Սոցիալական կարծրատիպերի ձևավորումը մի շարք մեխանիզմների գործունեության հետևանք է, որը վերաբերում է ինչպես անհատի գիտակցության ոլորտին, այնպես էլ սոցիալական գործընթացների և փոխհարաբերությունների ոլորտին: Այդ մեխանիզմները կարող են գործել ինչպես միմյանցից անկախ, այնպես էլ միասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անի Նազարյան, Սոցիալական կարծրատիպերի և իրենց իմաստով դրանց նման սոցիալ-հիգիենական այլ երևույթների համահարաբերակցության վերլուծություն, հանրային կառավարում գիտական հանդես, Երևան, 2016, համար 2, Էջ 244–250:
2. Андреева Г.М. Социальная психология, М., 2007.
3. Белинская Е.П., Тихомадрицкая О.А., Социальная психология: Хрестоматия, 2003 г.- 471 с.
4. Бодалев А.А. О социальных эталонах и стереотипах и их роли в оценке личности / А.А. Бодалев, В.Н. Куницына, В.Н. Панферова // Человек и общество: (ученые записки НИИКСИ). – Л.: изд-во Л. үн-т. – вып. 9. – 1971.
5. Липпман У. Общественное мнение /пер. с англ. Т.В. Барчунова, под ред. К.А. Левинсон, К.В. Петренко. М.: Институт Фонда «Общественное мнение», 2004. — 68 с.
6. Краткий психологический словарь / Сост. Л.А.Карпенко; под общ. Ред. А.В.Петровского, М.Г.Ярошевского. – М.: Политиздат, 1985.
7. Мацумото Д. Психология и культура / Д.Мацумото. – СПб.: ПРАЙМ- ЕВРОЗНАК, 2002.
8. Шибутани Т. Социальная психология. М., 1999. — 544 с.
- 9.Forgas, J.P. & Moylan, S.J. (2002). Affective influences on self-perception and self-disclosure. In: J.P. Forgas & K. D. Williams, (Eds.) The social self: Individual, interpersonal and intergroup perspectives. (pp. 73–96). New York: Psychology Press.
10. Tajfel H. Intergroup behavior // Tajfel H., Fraser C. (eds.) Introducing social psychology. N. Y.: Penguin Books, 1978. P. 401—466.

11. Tajfel H. Social stereotypes and social groups. – Intergroup behaviour / Ed. by J.C. Turner, H. Giles. Oxford, «Basil Blackwell», 1981

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ МЕХАНИЗМЫ И ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ СОЦИАЛЬНЫХ СТЕРЕОТИПОВ

НАИРА АКОПЯН

*Национальная Академия наук РА, Международный научно-образовательный центр, декан,
доктор психологических наук, профессор*

ЖОЗЕФИНА ЕСАЯН

*Национальная Академия наук РА, Международный научно-образовательный центр,
аспирант кафедры психологии*

Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № «16A-5a08»

В статье представлены основные механизмы и процессы формирования социальных стереотипов. Стереотипы основаны на психологических процессах, таких как формирование понятий и классификаций, атрибуций, эмоций, оценки и памяти. Стереотипы являются продуктом психологических процессов. Источником формирования социальных стереотипов является личный опыт и правила, разработанные обществом.

SOCIO-PSYCHOLOGICAL MECHANISMS AND CHARACTERISTICS OF FORMATION OF SOCIAL STEREOTYPES

NAIRA HAKOBYAN

The National Academy of Sciences of the Republic of Armenia, International Scientific-Educational Center, Dean, Doctor of Psychological Sciences, Professor

JOZEFINA YESAYAN

The National Academy of Sciences of the Republic of Armenia, International Scientific-Educational Center, PhD student, Department of Psychology

This work was supported by the RA MES State Committee of Science in the framework of project № ‘16A-5a08’.

The article presents the main mechanisms and processes for the formation of social stereotypes. Stereotypes are based on such psychological processes as the formation of concepts and classifications, attribution, emotions, evaluation and memory. Stereotypes are the product of psychological processes. Both personal experience and rules developed by society are the sources of the formation of social stereotypes.